13922

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«23» 11 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0212-21

Ձեռնարկողը՝ ***«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ***
Ք. Երևան, Արշակունյաց 127/21

Գործունեությունը՝ ***Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս պողոտա 60 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Քաղաք Երևան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
թիվ ԲՓ 0212-21
<23> 11 2021թ.

Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս պողոտա 60 հասցեում նախատեսվող բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս

Ձեռնարկող՝	«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության կատեգորիա՝	«Գ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	ք. Երևան Արաբկիր վարչական շրջան

«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Երևանի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս պ. 60 հասցեում կառուցել բազմաֆունկցիոնալ բնակելի համալիր: Կառուցապատման համար նախատեսված հողամասի մակերեսը կազմում է 0.565 հա: Կառուցապատման աշխատանքային նախագծերը մշակվել են Երևանի քաղաքապետարանի կողմից 08.02.2021թ. տրված N01/18-07/216-Ա նախագծման թույլտվության պահանջներին համապատասխան (նախագծման թույլտվության ժամկետը սահմանված է 2 տարի):

Նկարագրական մաս

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցապատման համար նախատեսված տարածքը գտնվում է Երևանի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտաս պ. 60 հասցեում: Հողամասի մակերեսը կազմում է 0.565 հա՝ կադաստրային ծածկագիր՝01-003-0223-0197: Տվյալ հողամասի վրա նախատեսվող բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը գտնվում է Կոմիտաս պողոտայի մերձակա տարածքում, բուն պողոտայից որոշակի հեռավորության վրա, դեպի Զարյան փողոց: Տարածքն ունի բնական թեքություն՝ դեպի Զարյան փողոցի ուղղությամբ, վերին և ստորին նիշերի տարբերությունը կազմում է 5 մետր: Հողամասը ծանրաբեռնված է արտադրամասով, որե ենթակա է ապամոնտաժման: Արտադրական շենքի մակերեսը կազմում է 1256 մք: Հողմասում բուսականությունը բացակայում է, տարածքը ասֆալտապատ է: ՀՀ Կառավարության 29.12.2011թ. N1920–Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Երևան քաղաքի ավագանու 23.12..2020 թ. N313-Ա և Երևանի քաղաքապետի 08.02.2021թ. N216-Ա որոշումներով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխվել են համապատասխանաբար բնակավայրերի և բնակելի կառուցապատման: Գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Բազմաֆունկցիոնալ համալիրի անմիջապես հարևանությամբ գտնվում է «Սուրբ Խաչ» եկեղեցին: Տարածքի հարևանությամբ առկա են նաև 2-3 հարկանի բնակելի և հասարակական կառույցներ, ինչպես նաև 14 հարկանի բազմաբնակարան բնակելի շենք: Նախագծային փաստաթղթերի մշակման համար հիմք են ծառայել .

- պատվիրատույի կողմից տրամադրված նախագծային առաջադրանքը

- Երևանի քաղաքապետարանի կողմից տրված 08.02.2021թ. տրված N01/18-07/216-Ա նախագծման թույլտվությունը
- տեղամասի ինժեներա-երկրաբանական պայմանների եզրակացությունը
- տեղանքի գեոդեզիական հանույթը:

Շինարարական աշխատանքներն իրականացվելու են ըստ ժամանակացույցի և օրացուցային գրաֆիկի, որի տևողությունը հաշվարկվել է 36 ամիս:

Համալիրի ճարտարապետական և գեղարվեստական լուծումների ընտրության մեջ մեծ դեր է խաղացել Սուրբ Խաչ եկեղեցին: Հաշվի առնելով եկեղեցու ճարտարապետությունը համալիրի արտաքին տեսքում շեշտը դրվել է կամարակապ խորշերի և ժամանակակից դինամիկ ծավալային լուծումների համադրության վրա: Համաձայն նախագծի համալիրը եկեղեցուն հարող մասում ունի 8 վերգետնյա հարկ, որը նիշով համապատասխանում է եկեղեցու թմբուկի ստորին նիշին, որից հետո տերասաձև զարգանալով՝ հաշվի առնելով եկեղեցու թմբուկի վերին նիշը, ինչպես նաև վեհարի վերին նիշը աստիճանաբար աճելով ստանում է նախ՝ 11 հարկանի ծավալ, 15 հարկանի ծավալ, ապա վերջնական տեսքի է գալիս 19 հարկանի աշտարակով:

Համալիրն ունի ստորգետնյա ավտոկայանատեղի, հաշվի առնելով բնական ռելեֆը մուտքը նախատեսվում է իրականացնել -1 հարկի նիշից: Շինությունը սեյսմիկ կարաններով բաժանվում է 3 մասնաշենքի, որոնցում 1 և 2 մասնաշենքերը ունենում են մեկ մուտքային հանգույց, իսկ 3-րդ մասնաշենքը երկու մուտքային հանգույց: Կառույցի 1,2,3 մասնաշենքերի առաջին վերգետնյա հարկը և - 1 կիսաստորգետնյա հարկը ծառայելու են հասարակական նպատակով, ստորգետնյա 2 հարկերում ամբողջ հողամասի մակերեսով կազմակերպված է ավտոկայանատեղիներ: 2-րդ հարկից սկսած նախատեսված են բնակելի հարկեր: Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի ընդհանուր բնակարանների քանակը կազմում է 297 բնակարան, իսկ ավտոկայանատեղերի քանակը 208 կայանատեղի, որը կազմում է ընդհանուր բնակարանների քանակի 70%-ը: 1,2,3 մասնաշենքերը միասին վերգետնյա կառուցապատման մակերեսը կազմում է 2697.6 քառ.մետր: Ստորգետնյա կառուցապատման մակերեսը կազմում է 5441.0 քառ.մետր: Համալիրի կոնստրուկտիվ համակարգը իրենից ներկայացնում է երկաթբետոնե շրջանակային հիմնակմախք: 1,2,3 մասնաշենքերի հիմքերը երկաթբետոնե ժապավենաձև են: Արտաքին պատերը նախատեսվում են իրականացնել 1 շարք 200մմ հաստությամբ ամրանավորված բետոնե բլոկներով, 80մմ հաստությամբ հանքաբամբակ ջերմամեկուսիչ սալերով (արտաքին կողմից) և երեսպատել ստադախարսխային համակարգի միջոցով 40մմ հաստությամբ տուֆե սալերով:

Ինժեներական հաղորդակցուղիներից յուրաքանչյուրի համար (ջրամատակարարում, ծխահեռացում, էլեկտրամատակարարում, հեռահաղորդակցության կապուղիներ) նախատեսված են առանձնացված հորաններ:

Դեպի պատշգամբ ելք ունեցող բոլոր բացվածքները նախատեսվում է իրականացնել հրակայուն ապակիներց և շրջանակներից:

Վերելակը նախատեսվում է իրականացնել հակահրդեհային պահանջներին համապատասխան: Աստիճանավանդակների դռների վրա տեղադրվում է ինքնափակման համակարգ: Ավտոհանգրվանի հարկերը իրարից առանձնացված են ինքնաշխատ դարպասով: Բնակելի համալիրի ստորգետնյա հարկերում նախատեսվում են պաշտպանողական կառույցներ բնակիչներին անհրաժեշտության դեպքում պատսպարելու նպատակով:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել: Կանաչապատումը իրականացվելու է տարածաշրջանին բնորոշ ծառատեսակներով և բուսականությամբ, որի համար ընկերության կողմից նվաստակի

համապատասխան բարեկարգման, կանաչապատման և արդիականացման դենդրոնախագիծ:

Կառույցի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- հողատարածքի ընդհանուր մակերես – 5651 քմ
- վերգետնյա հատվածի կառուցապատման մակերես – 2553.6 քմ 45,2%
- կանաչապատման մակերես – 2485,7 քմ 43,5%
- ճանապարհներ և սալվածք – 611,3 քմ 11,3%
- բնակարանների թիվ – 297
- ստորգետնյա ավտոկայանտեղի – 208:

Շինարարական մոնտաժային աշխատանքները պետք է կատարվեն պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Կռունկով բեռի տեղափոխումը բացառիկ դեպքերում գոյություն ունեցող շենքերի տանիքի վրայով կատարվում է շինարարության ղեկավարի գրավոր կարգադրությամբ, ապահովվելով բեռի անվտանգ տեղափոխումը, անվտանգության ճարտարագետի մշտական ներկայությունը: Ապրանքային բետոնը շինհրապարակ է բերվելու պատրաստի վիճակում՝ բետոնատար ինքնաթափերի միջոցով՝ ավտոմատ բետոնա-շաղախային հանգույցից: Ամրանային կոնստրուկցիաները պետք է պատրաստվեն հատուկ պոլիգոններում, մասամբ շինհրապարակում: Շինարարական հրապարակում չի նախատեսվում շինանյութերի կամ սորուն նյութերի պահեստներ:

Շինարարության ընթացքում կկատարվեն անհրաժեշտ միջոցառումներ շրջակա միջավայրի պահպանության համար: Փոշուց խուսափելու համար տարածքը մշտական խոնավ կպահվի, չեն կատարվի նորմայից ավել վնասակար արտանետումներ դեպի մթնոլորտ, շինմեքենաները շինհրապարակ կմտնեն և դուրս կգան մաքուր վիճակով: Բնահողով բարձված մեքենաների թափքը պետք է թրջել և ծածկել պոլիէթիլենային թաղանթներով թույլ չտալով փոշու ամպի գոյացություններ: Երեկոյան ժամերին կդադարեցվեն աղմկոտ աշխատանքների կատարումը: Պարբերաբար և ըստ անհրաժեշտության կկազմակերպվի շինարարական աղբի տեղափոխում թափոնատեղ:

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 1050 հազ. դրամ:

Բնակելի համալիրի նախագիծը ենթադրում է հողային աշխատանքների իրականացում, ե /բ հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 67000 մխ ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ և 20300 մխ հետ լիցք: Ավելցուկային 46700 մխ ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր համապատասխան թույլտվություն ստանալուց հետո:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 70 մարդ, որոնց կոմունալ և կենցաղային կարիքները հոգալու համար շինհրապարակում կտեղադրվեն ժամանակավոր սանհանգույցներ, որոնք շինաշխատանքների ավարտից հետո կապամոնտաժվեն:

Ջրամատակարարումը կիրականացվի է գոյություն ունեցող ջրատարից, համաձայն Վեոլիա ջուր ՓԲԸ կողմից տրված տեխնիկական պայմանի, որը միացված կլինի համայնքային ջրամատակարարման ցանցին՝ մեկ մուտքագծով: Ջրամատակարարման համակարգի համար նախատեսված է չորս պոմպ: Ավտոկայանատեղում նախատեսված են ջրի ծորակներ լվացման համար:

Շենքի ջերմամատակարարման աղբյուր է հանդիսանում տանիքում գտնվող կաթսայատունը, տաք ջուրը պատրաստվում է կաթսայատան ջրատաքացուցիչների միջոցով, տաք ջրամատակարարման ցանցի համար նախատեսված է տաք ջրի վերաշրջանառություն: Որպես ջեռուցիչ սարքեր ընտրված են ջեռուցիչ մարտկոցները

Բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի 1-ին, 2-րդ և 3-րդ մասնաշենքերի և բակային տարածքի համար նախատեսնված է կենցաղային կոյուղու ներքին ցանց, որը կմիացվի համայնքային կոյուղատարին: Կենցաղային կոյուղու խողովակագծերը ընտրված են պոլիվինիլքլորիդային ռետինե սեղմիչ օղակներ ունեցող խողովակներից:

Նախագծում նախատեսված են օդամշակման սարքերի, օդամուղների և ջեռուցիչ սարքերի վիբրացիայի և աղմուկի դեմ միջոցառումներ, որտեղ հաշվի առնվել նորմատիվային պահանջները: Օդափոխության համակարգերում նախատեսված են աղմուկախլացուցիչներ ներքաշող սարքավորումների համար ճկուն միացումներ, որոնք ապահովում են սպասարկվող նորմավորված աղմուկի չափը: Օդափոխության համակարգերում նախատեսված են աղմուկախլացուցիչներ ներքպշող սարքավորումների համար ճկուն միացումներ, որոնք ապահովում են սպասարկվող նորմավորված աղմուկի չափը:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Կանաչապատման աշխատանքները իրականացնելու համար կառուցապատողի կողմից կնախապատրաստվի «Բնակելի համալիր տարածքի բարեկարգման և արդիականացման նախագիծ», որը կհամաձայնեցվի Երևանի քաղաքապետարանի հետ:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ: Բուսականության տեսակայնի և քանակային կազմը կներկայացվի կանաչապատման սխեմայի վրա:

Կանաչապատվող տարածքում կիրականացվեն հետևյալ ագրոմելիորատիվ միջոցառումները՝ ոռոգման համակարգի անցկացում, համաձայն ծառագիտական նախագծի համարակալված ցցափայտերի օգնությամբ ծառերի ու թփերի փոսերի տեղի նշահարում, ծառերի համար 1մ խորությամբ և 50 սմ լայնության փոսերի պատրաստում, թփերի համար 50-60 սմ խորությամբ և 40 սմ լայնության փոսերի պատրաստում, բոլոր փոսերի մոտ համարժեք ծավալի հողախառնուրդի կուտակում.

Ոռոգումը իրականացվում է պոմպակայանում տեղակայված ոռոգման պոմպի միջոցով: Կանաչ գոտիների ոռոգումը իրականցվում է ռոտորային և ցնցուղային ջրացրիչների միջոցով: Ոռոգման ցանցում առկա են կաթիլային ոռոգման հանգույցներ:

Շահագործման ընթացքում կառաջանա կենցաղային աղբ, որը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի համապատասխան ընկերության կողմից:

Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

Նոր կառուցվող բնակելի մասնաշենքերի շինարարության ընթացքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք կարող են առաջանալ հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի այրման արդյունքում:

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման և բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Այս աշխատանքների ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նվազեցնելու նպատակով նախատեսված են ներքոհիշյալ բնապահպանական միջոցառումները.

օդային ավազանը և շրջակա միջավայրը աղտոտումից պահպանելու համար.

- կառուցապատման ենթակա տարածքի ցանկապատում,
- կառուցվող շինությունների ծածկում համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- փոշի առաջացնող շինարարական աշխատանքների ընթացքում ջրցանի իրականացում փոշենստեցման նպատակով, ջրցանը հաշվարկել այնպես, որ չառաջանա մակերևութային հոսքեր, փոշու արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգավորում,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան թաղանթով, իսկ նրանց տեղափոխումը կատարել փակ ծածկով մեքենաներով
- իրականացնել մեքենաների և շինտեխնիկայի անվադողերի լվացում մինչև շինհրապարակից դուրս գալը
- շինարարական գործընթացում ներգրավված տեխնիկայից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով՝ սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակի ապահովվում
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով կատարել հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ
- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավազ կամ մանրախիճ, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և կամ քսայուղերի արտահոսք, այն օգտագործելու համար, ապա պետք է աղտոտված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումների իրականացում, աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում
- շինարարական նյութերը տեղադրում բետոնապատ մակերեսի վրա,
- աղմկահարույց շինարարական աշխատանքների և տրանսպորտի տեղաշարժի հնարավորինս իրականացում օրվա ցերեկային ժամերին,
- մեքենաները և սարքավորումներիը կկայանվեն զգայուն ազդակակիրների զգալի հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում՝ շինարարական աղբն է 360 մ³ և կենցաղային աղբ՝ 1,0 տ: Բնակելի համալիրի կառուցման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր է, որ թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

Պատճառաբանական մաս

Նախնական գնահատման հայտի փորձաքննական գործընթացին մասնակցել են քաղաքաշինության, կադաստրի կոմիտեները, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, առողջապահության, արտակարգ իրավիճակների նախարարությունները: Դիտողությունների և առաջարկությունների արդյունքում հայտը լրամշակվել է: Նախնական գնահատման և փորձաքննության փուլում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անցկացված հանրային քննարկումներում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Համալիրի կառուցման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ, ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Անհրաժեշտ է շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված,
- Անհրաժեշտ է պահպանել քաղաքաշինության նախարարի 14.10.2014թ. N263-Ն և 31.03.2014թ. N93–Ն հրամաններով հաստատված «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում»՝ ՀՀՇՆ 30-01-2014, և բնակելի շենքեր. Մաս 1. «Բազմաբնակարան բնակելի շենքեր»՝ ՀՀՇՆ 31-01-2014, նորմերի պահանջները,
- Շինարարական աշխատանքների ընթացքում պատմամշակութային և հնագիտական շերտերի ի հայտ գալու դեպքում՝ հետագա աշխատանքներն իրականացնել համապատասխան մասնագետի՝ հնագետի եզրակացություն ստանալուց հետո,
- Անհրաժեշտ է կանաչապատման աշխատանքներն իրականացնել ըստ հայտում ամրագրված տվյալների՝ ապահովելով հողամասի առնվազն 40%-ը որպես կանաչապատման տարածք, և Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված կանաչապատման նախագծի,
- Անհրաժեշտ է շինարարության ընթացքում պահպանել հնարավոր ազդեցությունների կանխելուն ուղղված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագրերում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը,
- Տարածքում առկա քանդման ենթակա շինությունների քանդման աշխատանքները իրականացնել նախագծային ժամանակացույցով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ԱՐՄ ԿՈՆՍՏՐԱԿՏ 1» ՍՊԸ-ի կողմից Երևանի Արաբկիր վարչական շրջանի Կոմիտասի պողոտա 60 հասցեում բազմաֆունկցիոնալ համալիրի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական եզրակացություն՝ փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմաններով:

Առաջատար մասնագետ՝ Ա.Հարությունյան